Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-06-2023 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՐՈՐՏՆԵՐ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՐՈՐՏՆԵՐ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԿՈՏԱՅՔ ԱՐՋՆԻ Գ.ԱՐՋՆԻ չկա
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00133
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2001-01-03
1.5 ՀՎՀՀ-ն		02512386
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)99415413
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.arznikurort.am
1.8 Էլեկտրոնային փոստը		agnesya.pogosyan@mail.ruil.ru
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Գագիկ Մաղոյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	27	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	առողջարանային բուժման և հանգստի կազմակերպում	20,983,841
	վարձակալություն	7,900,945
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	առողջարանային բուժման և հանգստի կազմակերպում	48,753,566
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
առողջարանային բուժման և հանգստի կազմակերպում	74,870,610	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	74,870,610	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	74,870,610	

Նշումներ՝

Հաշվետվությանը կցված եզրակացության հետ ներառված է նաև<<Հայաստանի կուրորտներ >>սոցիալական առողջապահական հիմնադրամի 2022թ-ի <<ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ>> ՍՊԸ-Ի/աուդիտի/ կողմից հաստատված ֆինասական հաշվետվությունը:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____20____ էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

ԵՐԵՎԱՆ, 2023

«Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտ

«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

Բովանդակություն

3	**Անկախ աուդիտորի եզրակացություն**
6	**Անդամների ցանկ**
7	**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**
8	**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**
9	**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**
10	**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ**
11	**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

«Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական հիմնադրամի գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Հիմնադրամ
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Գլխավոր տնօրեն	Գագիկ Մադոյան

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական հիմնադրամի ղեկավարությանը և հոգեբարձուների խորհրդին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հատուկ նպատակի հիմունքի հանձնաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունները (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն) 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա համար, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը ու դրամական միջոցների հոսքերը՝ Փոքր ու Միջին Կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի համաձայն (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք չենք նշանակվել որպես Ընկերության աուդիտորներ նախքան 2022 թվականի դեկտեմբերի 31-ը, ուստի չէինք կարող մասնակցել Ընկերության ակտիվների և պարտավորությունների գույքագրման գործընթացին:

Մենք չենք կարողացել այլընտրանքային ընթացակարգերի կիրառմամբ համոզվել 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված 77,586 հազար դրամ չափով առկա պաշարներից ի պահ հանձնված 38,408 հազար դրամ գումարով պաշարների վերաբերյալ: Հետևաբար, ղեկավարությունը պաշարները չի ներկայացրել ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով, այլ դրանք ներկայացրել է միայն ինքնարժեքով, ինչը հանդիսանում է շեղում ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ներից:

Նշված հարցի արդյունքում, մենք չենք կարողացել որոշել արդյոք անհրաժեշտ կլիներ կատարել պաշարների արտացոլված գումարների ճշգրտումներ, ինչպես նաև համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունների տարրերի ճշգրտումներ:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ 800/805) համապատասխան, համաձայն որոնց պետք է համապատասխանենք վարքագծի պահանջներին և աուդիտը պլանավորենք և անցկացնենք Ֆինանսական հաշվետվություն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Մենք անկախ ենք Հասարակական կազմակերպությունից՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների և պահպանել ենք էթիկայի մեր պարտականությունները համաձայն այդ պահանջների:

Ստացված և օգտագործված ֆինանսական միջոցների վերաբերյալ աուդիտորական ապացույց ձեռք բերելու նպատակով աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում, որոնց ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ՝ էական խեղաթյուրման ռիսկերի գնահատումը, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ: Ռիսկերը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում Կազմակերպության կողմից իրականացվող ներքին վերահսկողությունը՝ աուդիտի այն ընթացակարգերը պատրաստելու համար, որոնք տեղին են տվյալ

պայմաններում, սակայն ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքների շեշտադրում

Առանց մեր եզրակացությունը ձևափոխելու, մենք ուշադրություն ենք դարձնում այն հանգամանքին, որ ֆինանսական հաշվետվությունը պատրաստված է օժանդակելու «Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական հիմնադրամի շահառուներին՝ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջները բավարարելու համար: Հետևաբար, ֆինանսական հաշվետվությունը չի կարող կիրառվել այլ նպատակներով:

Այլ հանգամանք

Ընկերության համադրելի տեղեկատվությունը՝ 2021 թվականի ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել «Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊ Ընկերության կողմից և կարծիք չի ձևափոխվել:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման և ներքին հսկողության համար:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում

աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական

խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե

Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման լիազոր անձանց ներկայացնում ենք հաշվետվություն՝ անկախության էթիկական պահանջներին համապատասխան և հաղորդակցում ենք նրանց բոլոր փոխհարաբերությունների ու հարցերի վերաբերյալ, որոնք կարող են, ողջամտորեն ենթադրել, որ ազդում են մեր անկախության, և երբ այն կիրառել է՝ հարակից երաշխիքների վրա:

Կառավարման լիազոր անձանց հետ հաղորդակցված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք առավելագույն նշանակություն են ունեցել ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվության աուդիտի ընթացքում և, հետևաբար համարվում են աուդիտի հիմնական հարցերը: Մենք նկարագրում ենք այս հարցերը աուդիտորական եզրակացության մեջ, եթե օրենքը կամ կանոնակարգը թույլատրում է այդ հարցերի հրապարակային բացահայտումը կամ, երբ ծայրահեղ հազվադեպ դեպքերում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի եզրակացությունում, քանի որ դրանով անբարենպաստ հետևանքները կարող են գերակշռել հանրային շահի առավելությունները:

Տնօրեն Դ. Հարությունյան

Աուդիտոր Կ. Շահինյան

2023 թվականի հունիսի 20

«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ»
"GLOB AUDIT"
"ГЛОБ АУДИТ"
00131856

Հոգեբարձուների խորհրդի անդամների ցանկ

Էլեն Մանասերյան	նախագահ
Խաչիկ Առաքելյան	անդամ
Հասմիկ Ջհանգիրյան	անդամ
Սիլվա Հարությունյան	անդամ
Կարինե Ալոյան	անդամ
Կարինե Ավետիսյան	անդամ
Գագիկ Ղարիբյան	անդամ

«Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական հիմնադրամի
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2022թ. հազար դրամ	2021թ. հազար դրամ
Ծառայությունների մատուցումից հասույթ	3	77,638	73,547
Ինքնարժեք	4	(57,975	(54,179)
Վարչական ծախսեր	5	(16,896)	(15,890)
Այլ գործառնական ծախսեր	6	(24,744)	-
Գործառնական հավելուրդ/(պակասուրդ)		**(21,977)**	**3,478**
Այլ օգուտ/(կորուստ), զուտ		-	-
Հավելուրդ մինչև հարկումը		**(21,977)**	**3,478**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում		**(34)**	(626)
Տարվա զուտ հավելուրդ		**(22,011)**	**2,852**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 20-ին:

«Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական հիմնադրամի գլխավոր տնօրեն — Գագիկ Մադոյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական հիմնադրամի
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	2022թ. Հազար դրամ	2021թ. Հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	77,586	77,528
Դեբիտորական և այլ ընթացիկ պարտքեր		200,674	220,349
Դրամական միջոցներ		7,282	5,937
Այլ ընթացիկ ակտիվներ	7	1,134	359
		286,676	**304,173**
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	440,656	445,665
Ոչ նյութական ակտիվներ		70	80
Հետաձգված հարկային ակտիվներ	9	464	-
		441,190	**445,745**
Ընդամենը ակտիվներ		**727,866**	**749,918**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	-	289,321
Առևտրային կրեդիտորական պարտքեր	12	1,850	4,878
Հարկեր և այլ պարտադիր վճարներ	12	1,751	1,341
Արձակուրդային պահուստ	12	2,576	-
Այլ ընթացիկ պարտավորություններ	12	300	300
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**6,477**	**295,840**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	368,020	430,206
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**368,020**	**430,206**
Ընդամենը պարտավորություններ		**374,497**	**726,046**
Սեփական կապիտալ			
Կուտակված հավելուրդ		353,369	23,872
Ընդամենը սեփական կապիտալ		**353,369**	**23,872**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**727,866**	**749,918**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 20-ին:

«Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական
հիմնադրամի գլխավոր տնօրեն Գագիկ Մադոյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական հիմնադրամի
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2022թ. Հազար դրամ	2021թ. Հազար դրամ
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Մատուցված ծառայություններից մուտքեր	72,409	72,486
Այլ մուտքեր	-	293
Նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով	2,095	3,047
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	34,871	29,611
Աշխատավարձի գծով վճարում	23,415	21,295
Հարկերի և պարտադիր վճարների գծով վճարումներ	10,215	10,488
Այլ գործառնական ելքեր	468	-
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	**1,345**	**8,338**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Փոխառությունների ստացումից մուտքեր		1,595
Փոխառությունների մարումից ելքեր		5,258
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	**-**	**(3,663)**
Դրամական միջոցների զուտ աճ/(նվազում)	**1,345**	**4,675**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների վրա	-	-
Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ	5,937	1,262
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	**7,282**	**5,937**

Digitally signed by POGHOSYA
8012590131
Date: 2023.09.11 15:38:10 AM

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 20-ին:

«Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական հիմնադրամի գլխավոր տնօրեն

Գագիկ Մադոյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1	Ընդհանուր տեղեկատվություն	11
2	Պատրաստման հիմունքներ - հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական մոտեցումներ	12
3	Ծառայությունների մատուցումից հասույթ	16
4	Ինքնարժեք	17
5	Վարչական ծախսեր	17
6	Այլ գործառնական ծախսեր	17
7	Պաշարներ	17
8	Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17
9	Դրամական միջոցներ	17
10	Հիմնական միջոցներ	18
11	Ակտիվներին վերաբերվող շնորհներ	20
12	Եկամուտներին վերաբերվող շնորհներ	20
13	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	20
14	Համեմատական տեղեկատվության վերաներկայացում	20

1 Ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, առողջապահական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամը ստեղծվել է 2001թվականին Հայաստանի արհմիությունների կուրորտների խորհրդի վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում հիմնադրի որոշմամբ և գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Հիմնադրամի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ իրավական ակտերի համաձայն և կանոնադրության հիման վրա:

Հիմնադրամի հիմնադիրը «Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա» արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունն է:

Հիմնադրամը գրանցված է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 20.06.2003 թվականին, գրանցման համար՝ 222.160.00133, ՁԿԴ 39084680, ՀՎՀՀ՝ 02512386, գտնվելու վայրի հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Կուրորտ Արզնի:

Հիմնադրամի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում առողջարանային բուժման և հանգստի կազմակերպման ու կուրորտային գործի զարգացումը:

Հիմնադրամի շահառուներն են՝

- առողջարաններում ու հանգստյան տներում բուժման և հանգստի կարիք ունեցող ֆիզիկական ամձիք, ինչպես նաև առողջարաններն ու հանգստյան տները շահագործող իրավաբանական անձիք:

Հիմնադրամը անձամբ զբաղվում է ձեռնատիրական գործունեության հետևյալ տեսակներով.

- մարդկանց առողջարանային բուժման ու հանգստի կազմակերպում;
- առողջարաններին ու հանգստյան տներին բնական բուժիչ ջրերի ու նյութատեխնիկական մատակարարման կազմակերպում;
- ռեստորանային գործունեություն:

«Հայաստանի կուրորտներ» սոցիալական առողջապահական հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգեբարձուների խորհուրդն է, իսկ ընթացիկ գործունեությունը ղեկավարող կառավարիչը՝ Հիմնադրամի տնօրենը: Հիմնադրամի գլխավոր տնօրենն է հանդիսանում Գագիկ Մադոյանը:

2 Պատրաստման հիմունքներ-հաշվապահական քաղաքականության հիմնական մոտեցումներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Չկան նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2022 թվականի հունվարի 1-ից, և որոնք ունեն էական ազդեցություն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Դեռևս ուժի մեջ չմտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

Չկան դեռևս ուժի մեջ չմտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք ազդեցություն կունենան կամ հավանական է, որ ազդեն Հիմնադրամի ապագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հիմնադրամը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

<u>Գնահատումներ և ենթադրություններ</u>

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները կազմվում են անընդհատության հիմունքով, ինչը ենթադրում է, որ Հիմնադրամի բոլոր ակտիվները կօգտագործվեն, և պարտավորությունները

կմարվեն Հիմնադրամի գործունեության բնականոն ընթացքի ընթացքում, առանց տեսանելի ապագայում Հիմնադրամը դադարեցնելու կամ լուծարելու մտադրության:

Հիմնադրամի շարունակական գործունեություն վրա մեծապես ազդող գործոնի և այդ գործոնի հետ կապված Հիմնադրամի ղեկավարության գնահատականներն ու դատողությունները ներկայացված են ստորև:

Անընդհատությանը վերաբերող գնահատումներ և դատողություններ

Հիմնադրամի ղեկավարությունը գնահատում է, որ այն կշարունակի իր գործունեությունը անընդհատության սկզբունքով:

Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել Հիմնադրամի ֆինանսական դրությունը, ընթացիկ դրամական միջոցների մնացորդը, ընթացիկ պարտավորությունները և ֆինանսավորում հավաքագրելու կարողությունը նոր և առկա ծրագրերի իրականացման համար: Հիմնադրամը մտադիր է կազմակերպել դրամահավաքի նոր արշավ և զարգացնել նոր հարաբերություններ, որոնք թույլ կտան հանգանակություն և դրամաշնորհային մուտքեր ապահովել Հիմնադրամի գործունեության իրականացման համար:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:

Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի ասիճանակարգ»):

Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)

Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից

Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ օրվա միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են) կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,

բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված

փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Հիմնադրամը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հիմնադրամի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել, եթե սույն գրության մեջ այլ բան նշված չէ:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ,
- Վարկեր,
- Առևտրային կրեդիտորական պարտքեր:

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և կրեդիտորական պարտքեր:

Դրամական միջոցների, կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Հոգաբարձուների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորություն կնվազեցնի ռիսկը՝ հնարավորինս բացառելու Հիմնադրամի արդյունավետ գործունեությանը խանգարող հանգամանքների առաջացումը: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է բանկերում պահվող դրամական միջոցներից:

Դրամական միջոցներ բանկում

Հիմնադրամը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի Հիմնադրամի կողմից դրամական միջոցները սպասարկող ՀՀ առևտրային բանկերը վստահելի են:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Հիմնադրամի գործարքներն արտահայտված են ՀՀ դրամից տարբեր արժույթով:

Հիմնադրամի արտարժութային ռիսկը հիմնականում առաջանում է ԱՄՆ դոլարով կամ այլ արտարժույթով բանկային մնացորդների, ինչպես նաև արտարժույթով արտահայտված ստացված վարկի գծով: Այս ռիսկն, ըստ էության, Հիմնադրամի կողմից չի կառավարվում՝ հաշվի առնելով դրա կառավարման հետ կապված ծախսերը և նման ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ գործիքակազմի բացակայությունը:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հիմնադրամի ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Հիմնադրամի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Հիմնադրամի քաղաքականության՝ Հիմնադրամը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ:

Այդ համատեքստում Հիմնադրամը նպատակ ունի բավարար կանխիկ գումար պահել իր պարտավորությունները կատարելու համար:

- Ստորև ներկայացված են Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով:
Հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով:

Հիմնական միջոցների մաշվածության ժամկետներն ըստ դասերի հետևյալն են.

Շենքեր, շինություններ	20-30 տարի	Գծային
Մեքենաներ, սարքավորում	3-10 տարի	Գծային
Տրանսպորտային միջոցներ	8-10 տարի	Գծային
Այլ հիմնական միջոցներ	8-10 տարի	Գծային

Շնորհներ

Պետական շնորհը կազմակերպությանը ռեսուրսների փոխանցման տեսքով պետության կողմից տրամադրվող օգնություն է՝ կազմակերպության գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց:

Պետական շնորհները չեն ներառում պետական օգնության այն ձևերը, որոնց հնարավոր չէ խելամտորեն որևէ արժեք վերագրել, ինչպես նաև պետության հետ գործարքները, որոնք հնարավոր չէ տարանջատել կազմակերպության սովորական առևտրային գործարքներից

Կազմակերպությունը որպես շնորհ հաշվառում է ՀՀ Գիտության Կոմիտեից ստացված դրամական միջոցները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով:

Կազմակերպությունը պետական շնորհները պետք է ճանաչի հետևյալ կերպ՝

ա) շնորհը, որը ստացողի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են.

բ) շնորհը, որը ստացողի համար սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է.

գ) ստացված շնորհները, նախքան **հասույթի ճանաչման** չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես **պարտավորություն**:

Կազմակերպությունը շնորհները պետք է չափի ստացված կամ ստացվելիք **ակտիվի իրական արժեքով**:

Կազմակերպությունը շնորհների վերաբերյալ պետք է բացահայտի **ֆինանսական հաշվետվություններում** ճանաչված պետական շնորհների բնույթը, գումարները և որպես եկամուտ չճանաչված պետական շնորհներին կցված և չկատարված պայմանները և այլ պայմանականություններ:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, Ընկերությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

3. Ծառայությունների մատուցումից հասույթ

	2022	2021
Ծառայությունների մատուցումից հասույթ	77,638	73,547
	77,638	**73,547**

4. Ինքնարժեք

	2022	2021
Աշխատակիցներին հատուցումների գծով	22,345	19,645
Նյութածախս	15,191	14,697
Սպասարկման և պահպանման ծախսեր	11,097	9,208
Միջնորդավճարներ /տուրիստական գործակալություններ/	4,265	2,809
Հիմնական միջոցների մաշվածություն և ամորտիզացիա	5,077	7,820
	57,975	**54,179**

5. Վարչական ծախսեր

	2022	2021
Աշխատակիցներին հատուցումների գծով	8,070	8,894
Մաշվածության և ամորտիզացիայի գծով	10	10
Փոստի և հեռահաղորդակցության գծով	327	340
Աուդիտի ծառայությունների գծով	500	500
Իրավաբանական ծառայությունների գծով	800	-
Չփոխհատուցվող հարկեր, տուրքերի գծով	951	1,595
Վառելիքի գծով	2,428	2,168
Նյութեր	60	319
Այլ ծախսեր	3,750	2,064
	16,896	**15,890**

6. Այլ գործառնական ծախսեր

	2022	2021
Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման գծով	22,168	-
Չօգտագործված արձակուրդային պահուստի գծով	2,576	-
	24,744	-

7. Պաշարներ

	2022	2021
Ապրանքանյութական արժեքներ	77,586	77,528
	77,586	**77,528**

8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2022	2021
Առևտրային դեբիտորական պարտքեր	222,842	220,349
Հնարավոր կորուստների պահուստ	(22,168)	-
Տրված կանխավճարներ	442	-
Այլ դեբիտորական պարտքեր	692	359
	201,808	**220,708**

9. Դրամական միջոցներ

	2022	2021
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	2,912	2,090
Դրամարկղ ազգային արժույթի	4,370	3,847
	7,282	**5,937**

Դրամական միջոցները պահվում են ՀՀ առևտրային բանկերում:

10. Հիմնական միջոցներ

	Շենքեր, շինություններ	Կառուց վածքներ	Տրանսպորտային միջոցներ	Մեքենաներ, սարքավորումներ	Արտադրա-տնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Առ 1 հունվարի 2021թ.	**401,015**	**19,954**	**6.974**	**54,129**	**50,112**	**532,184**
Ավելացումներ	-	-	-	-		-
Նվազեցումներ	-	-	-	(162)	(1,266)	(1,428)
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**401,015**	**19,954**	**6.974**	**53,967**	**48,846**	**530,756**
Ավելացումներ					67	67
Նվազեցումներ						
Վերադասակարգում	22,652	14,465	(1,660)	(45,852)	10,395	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**423,667**	**34,419**	**5,314**	**8,115**	**59,308**	**530,823**
Կուտակված մաշվածություն						
Առ 1 հունվարի 2021թ.	**37,643**	**11,618**	**4,169**	**24,766**	**829**	**79,025**
Ավելացումներ	1,460			1,700	2,906	6,066
Նվազեցումներ	-	-	-	-		-
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**39,103**	**11,618**	**4,169**	**26,466**	**3,735**	**85,091**
Ավելացումներ	1,460				3,616	5,076
Նվազեցումներ						
Վերադասակարգում	15,084	1,875	(664)	(18,351)	2,056	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**55,647**	**13,493**	**3,505**	**8,115**	**9,407**	**90,167**
Զուտ հաշվեկշռային արժեք						
Առ 1 հունվարի 2021թ.	**363,372**	**8,336**	**2,805**	**29,363**	**49,283**	**453,159**
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**361,912**	**8,336**	**2,805**	**57,501**	**45,111**	**445,665**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**368,020**	**20,926**	**1,809**	-	**49,901**	**440,656**

11. Ակտիվներին վերաբերվող շնորհներ

	2022	2021
Մնացորդը տարեսկզբին	**430,206**	**430,206**
Շնորհից եկամտի ճանաչում	(62,186)	-
Մնացորդը տարեվերջին	**368,020**	**430,206**

12. Եկամուտներին վերաբերվող շնորհներ

	2022	2021
Մնացորդը տարեսկզբին	**289,321**	**289,321**
Էական սխալի ճշգրտում	(289,321)	
Մնացորդը տարեվերջին	**-**	**289,321**

13. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2022	2021
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,850	3,424
Աշխատակիցների հատուցման գծով	-	222
Հարկերի գծով	1,699	1,064
Ստացված կանխավճարներ	-	1,232
Չօգտագործված արձակուրդային պահուստի գծով	2,576	-
Այլ	52	277
	6,177	**6,219**

14. Համեմատական տեղեկատվության վերաներկայացում

Հաշվետու տարում բացահայտվել են նախորդ տարվան վերաբերող չափման և ներկայացման սխալներ:Սխալների ուղղումները ունեցել են հետևյալ ազեցությունը.

ա) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

հազար դրամ

	31.12.2021 Նախկինում ներկայացված	Ճշգրտում, աճ/(նվազում)	31.12.2021 Վերաներկայացված
Հիմնական միջոցներ	445,666	(1)	445665
Դեբիտորական և այլ ընթացիկ պարտքեր	220,708	(359)	220,349
Այլ ընթացիկ ակտիվներ	-	359	359
Առևտրային կրեդիտորական պարտքեր	6,220	(1,342)	4,878
Հարկեր և այլ պարտադիր վճարներ	-	1,341	1,341

բ) Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

հազար դրամ

	31.12.2021	Ճշգրտում, աճ/(նվազում)	31.12.2021
	Նախկինում ներկայացված		Վերաներկայացված
Ինքնարժեք	-	54,179	54,179
Իրացման ծախսեր	19,332	(19,332)	-
Վարչական ծախսեր	50,737	(34,847)	15,890

Ֆինանսական հաշվետվությունների վավերացում

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2023թ. հունիսի 20-ին՝ գլխավոր տնօրեն Գագիկ Մադոյանի կողմից:

«Հայաստանի կուտորտներ» սոցիալական առողջապահական ֆիմնադրամի գլխավոր տնօրեն Գագիկ Մադոյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 11.09.2023 15:27